ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԲԷՑ-ՆԸ-ԲՄԽԾՁԲ-25/03» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ և ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆԱԽԱՌՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ
Մեկնարկ «13» մայիսի 2025թ.
Ժամը՝ 11:00
Ավարտ«27» մայիսի 2025թ.
Ժամը՝ 11:30

Հանձնաժողովի նախագահ՝

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության շահագործման ծառայության պետ, գլխավոր տնօրենի տեղակալ, գլխավոր ճարտարագետի պարտականությունները կատարող	Ա. Ասատրյան

Հանձնաժողովի անդամներ՝

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր ճարտարագետի տեղակալ	Լ. Ադամյան
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր ճարտարագետի տեղակալ	Ս. Իգիտբաշյան
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության ֆինանսական բաժնի պետ	Ա. Մովրովյան
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության իրավախորհրդատու	Վ. Սիմոնյան
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության ծրագրերի իրականացման ծառայության ներդրումային ծրագրերի իրականացման բաժնի գլխավոր մասնագետ	Տ. Պողոսյան
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության շահագործման ծառայության ներդրումային ծրագրերի իրականացման գծով առաջատար ճարտարագետ	Հ. Հովակիմյան
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության շահագործման ծառայության ներդրումային ծրագրերի իրականացման գծով ճարտարագետ	Ա. Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության ծրագրերի իրականացման ծառայության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ	Ն. Կիրակոսյան

Նախաորակավորման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ա. Ասատրյան)

1.1 «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից կազմակերպված «ԲԷՑ-ՆԸ-ԲՄԽԾՁԲ-25/03» ծածկագրով նախաորակավորման ընթացակարգի շրջանակներում հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

N/N	Մասնակցի անվանումը	ՀՎՀՀ	Էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար
1	GOPA Tech GmbH	03 234 6111 8	info-tech@gopa.eu

Ընդունել որոշում՝ կողմ-8, դեմ-0

2. Տեղեկատվություն՝ փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

(Ա. Ասատրյան)

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում պարզվել է հետևյալը.

- **GOPA Tech GmbH** ընկերության կողմից ներկայացված հրավերով պահանջվող առնվազն երկու նմանատիպ պայմանագրերում որպես ծառայությունների մատուցման պայմանագրի կողմ հանդես է եկել **GOPA-international Energy Consultants GmbH** ընկերությունը:
- -«Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը բավարարելու համար Ռելեական պաշտպանության և ավտոմատացման ճարտարագետ Համզա Աբրորովի ինքնակենսագրականում արտացոլված չէ հրավերով պահանջվող SCADA համակարգերի իմացության որևէ տեղեկատվություն և նույն մասնագետի մասով Հավելված 3-ի անգլերեն լրացված տարբերակում «մասնագիտական փորձառությամբ և աշխատանքային ռեսուրսներով սահմանվածի մասով» սյունակի «ժամանակահատվածը» տողում լրացված է 7 տարի:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ 23.05.2025 թվականին ընթացակարգը կասեցնել և առաջարկել մասնակցին ծանուցումը ստանալու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 26.05.2025 թվականը ներառյալ/ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել «ԲԷՑ-ՆԸ-ԲՄԽԾՁԲ-25/03» ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի narine.kirakosyan@hven.am էլ. փոստին:

2.1 Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ հայտերի գնահատման նիստ հրավիրել 27.05.2025 թվականին ժամը 11:30-ին:

Ընդունել որոշում՝ կողմ-8, դեմ-0

27.05.2025 թվականին ժամը 11:30-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները

3. <u>Տվյալներ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին</u>

(Ա. Ասատրյան)

3.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունները մասամբ, մասնավորապես.

GOPA Tech GmbH ընկերության կողմից ներկայացված հավաստումն առ այն, որ **GOPA Infra GmbH և GOPA-international Energy Consultants GmbH** միավորվել են և դարձել **GOPA Tech GmbH** ընկերություն չի արտացոլվում կազմակերպության գրանցման փաստաթղթում, քանի որ << GOPA-international Energy Consultants GmbH >> ընկերության փոխարեն միավորվող ընկերություն հանդես է եկել << GOPA-international Energy Consultants Middle East GmbH >> ընկերությունը, ինչով պայմանավորված մասնակիցը չի կարող համարվել «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին բավարարող ընկերություն:

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգի միակ մասնակցի հայտը գնահատել հետևյալ կերպ.

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Հայտ ներկայացրած մասնակից	Գնահատման արդյունք
1	Տեխնիկական աջակցության և վերահսկման խորհրդատուի ծառայություններ	GOPA Tech GmbH	անբավարար

3.2 Հիմք ընդունելով վերոգրյալը «ԲԷՑ-ՆԸ-ԲՄԽԾՁԲ-25/02» ծածկագրով գնման ընթացակարգի նախաորակավորված մասնակիցների ցուցակ չի կազմվում:

Ընդունել որոշում՝ կողմ-8, դեմ-0

4. «ԲԷՑ-ՆԸ-ԲՄԽԾՁԲ-25/03» ծածկագրով նախաորակավորման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

(Ա. Ասատրյան)

4.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունել որոշում՝ կողմ-8, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արամ Ասատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լևոն Ադամյան

Սիմոն Իգիտբաշյան

Արարատ Մովրովյան

Վիկտորյա Սիմոնյան

Տիգրան Պողոսյան

Հունան Հովակիմյան

Արփի Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Նարինե Կիրակոսյան